

ուրիշ թաղերէ եկած են հոս, կա՛մ օդափոխութեան համար կամ իրենց պարտատէրներուն չերեւալու համար:

Գեղիս գլխաւոր զբօսավայրն է *Սաքրզ աղաճի* կոչուած զբօսավայրն, ուր սիրահարութեան դէպքեր շատ կ'պատահին:

Գեղիս մէջ ջուր չկայ. ուստի հոս կրնան երթալ այն ծնողներն, որք կը վախնան, թէ իրենց տղաները ջուրի մէջ կ'իյնան եւ կ'իւղղուին. վասնզի խմելու իսկ ջուր չգտնուիր. երբեմն ծովուն ջուրը կ'իւմեն... լողալ սորվելու համար ծովը մտնողները

Գիւղիս հայ տուններուն թիւը որոշ չգիտցուիր. վասնզի օրէ օր աւելնալու վրայ է, ինչպէս նաեւ ազգասէրներու թիւն, որ վայրկենէ վայրկեան պակսելու վրայ է:

ԼԳ.

ՖԷՐԻ ԳԻՒՂ

Այս գեղին մէջ պատուական զարեջուր կ'շինուի. ազգային գործերու վերաբերութեամբ գիւղացիին թմրութիւնն յառաջ եկած է այս ըմպելիքէն, գոր շատ կ'իւմէ:

Քահանայ մը կայ, որ կկարդայ այս եկեղեցիին մէջ եւ կարդացած ժամանակը երբեմն յետեւը կնայի եւ եկեղեցւոյն մէջ մարդ մը տեսնելուն պէս գանձանակը կ'առնէ եւ կարդալով կսկսի պտըտցունել գանձանակն: Եկեղեցւոյն մէջ այս քահանայէս զատ մարդ տեսնելը հրաշքի կարգ անցած է:

Հազիւ յիսուն օվաթսուն տուն կայ հայո: Վարժարանին մէջ աշակերտները կկարդան Քերական, Սաղմոս եւ Նարեկ:

Բերայէն հոս կ'երթան կենդանիները զարեջուր խմելու, եւ մեռեալներն ալ թաղուելու. վասնզի հոս փոխադրուած է Բերայի գերեզմանատունը:

Օդն այնքան աղէկ է, որ ամեն կիրակի մեծ բազմութեամբ ամեն թաղերէ հոս կը դիմեն, քիչ մը օդ եւ շատ զարեջուր առնելու համար:

ԼԴ.

ԵԷՆԻ ԳԻՒՂ

Կամաց կամաց ազնուականներու բնակարան կդառնայ այս գիւղն եւ աղքատներու քաւարան: